

# ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՈՒՍԱՆՈՂԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ՕԳՏՎԵԼ ՈԱՇ-ԻՑ (օրինակի դիտարկում)

Կարենը ցանկանում է դառնալ շահագործող ինժեներ, իսկ Հովհաննեսը՝ նախագծող: Ուսումնասիրելով ՈԱՇ-ը՝ առաջինը հանգում է այն եզրակացության, որ իրեն անհրաժեշտ է ստանալ 6-րդ մակարդակի (բակալավրի) որակավորում, մինչդեռ երկրորդ ուսանողը եզրահանգում է, որ նախագծող ինժեներ դառնալու համար իրենից կպահանջվի 7-րդ (մագիստրոսի) որակավորմանը համապատասխանող գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

## Շահագործող ինժեներ

## Նախագծող ինժեներ

### 6-րդ մակարդակ՝ Բակալավր

- ➔ Կարող է կիրառել ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները՝ մասնագիտական աշխատանքի ընթացքում ծագած խնդիրները լուծելու համար:
- ➔ Կարող է ցուցաբերել ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:
- ➔ Կարող է իրականացնել մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, կայացնել ինքնուրույն որոշումներ:

### 7-րդ մակարդակ՝ Մագիստրոս

- ➔ Կարող է կիրառել (միջ) մասնագիտական ոլորտ(ներ)ի առաջավոր սկզբունքները և մեթոդները՝ նոր և անձանոթ իրադրություններում բարդ խնդիրներ լուծելու, հետազոտական ու նորարարական գործունեություն իրականացնելու համար:
- ➔ Կարող է հետազոտել մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները և տալ նորարարական ու ստեղծագործական լուծումներ, ինչպես նաև առաջադրել արդիական գաղափարներ ու մոտեցումներ:
- ➔ Կարող է ծավալել գործունեություն, որը պահանջում է բարդ և անձանոթ աշխատանքային իրադրությունների կառավարման ու վերափոխման ռազմավարական նոր մոտեցումներ:

# ԻՐՆՉ Է ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՈԱՇ)

ՈԱՇ-ը որակավորումների դասակարգման մի գործիք է, որը կրթական տարբեր մակարդակների համար սահմանում է գիտելիքի, կարողությունների և հմտությունների պահանջվող նվազագույն կազմը՝ դարձնելով որակավորումներն ավելի թափանցիկ և հասկանալի: ՈԱՇ-ի նպատակն է փոխկապակցել որակավորումները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հասարակության պահանջներին:

*Սույն ուղեցույցում ներկայացվում է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը և վերջինիս կարևորությունն ուսանողների համար, ինչպես նաև ուսանողների կողմից շրջանակի պրակտիկ կիրառման հնարավորությունները:*

Քանի որ ՈԱՇ-ում ներկայացված է յուրաքանչյուր որակավորման համար պահանջվող գիտելիքի, կարողությունների և հմտությունների լրակազմը, ապա ՈԱՇ-ի միջոցով ուսանողները կարող են տեղեկանալ, թե ինչ են իրենք գիտենալու և կարողանալու անել այս կամ այն որակավորումը ստանալուց հետո:



Co-funded by the  
Tempus Programme  
of the European Union



# ՀՀ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ Համառոտ ուղեցույց ուսանողների համար

3-րդ մակարդակ՝  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԹԵԿՆԱԾՈՒ



2-րդ մակարդակ՝  
ՄԱԳԻՍՏՐՈՍ



1-ին մակարդակ՝  
ԲԱԿԱԼԱՎՐ



## ՈԱՇ-Ն ԱՎԵԼԻ ՊԱՐԶ...

## ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## ՈԱՇ-Ն ՈՒՍԱՆՈՂԻ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ

Շեշտադրելով յուրաքանչյուր որակավորման շնորհման պահանջները՝ արտահայտված գիտելիքով, կարողություններով և հմտություններով, ՈԱՇ-ը երաշխավորում է տվյալ որակավորման համապատասխանությունը աշխատաշուկայի և հասարակության կարիքներին՝ ուսանողների համար ապահովելով մասնագիտական հաջողության հասնելու անհրաժեշտ նախադրյալներ: ՈԱՇ-ի յուրաքանչյուր մակարդակ ենթադրում է տեսական, գործնական կամ կիրառական մասնագիտական և ընդհանրական (փոխանցելի) գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ լրակազմ: Ընդ որում, որքան բարձր է տվյալ որակավորման մակարդակը ՈԱՇ-ում, այնքան ավելի բարդ և ընդգրկուն է վերոնշյալ լրակազմը:

*ՀՀ ՈԱՇ-ը ներառում է ութ մակարդակ, որոնք ներկայացված են ստորև:*

ՀՀ ՈԱՇ-ի ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
8	Գիտությունների թեկնածու
7	Մագիստրոս
6	Բակալավր
5	Մասնագետ
4	Միջնակարգ կրթության ատեստատ
3	Արհեստավոր
2	Հիմնական կրթության վկայական
1	Տարրական կրթության վկայական

### ԲԱԿԱԼԱՎՐ (180-240 կրեդիտ)

Բակալավրի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիք և կարողություններ մի շարք ոլորտներում՝ մասնագիտական աշխատանք կատարելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:

### ՄԱԳԻՍՏՐՈՍ (60-120 կրեդիտ)

Մագիստրոսի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն ոլորտի խոր մասնագիտացված գիտելիք և կարողություններ մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:

### ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ (180 կրեդիտ)

Գիտությունների թեկնածուի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն խոր և համալիր գիտելիք ու հատուկ հետազոտական կարողություններ գիտության կամ մասնագիտական գործունեության մեկ կամ մի քանի փոխհաստվող ոլորտներում՝ գիտելիքն ընդլայնելու և/կամ նոր գիտելիք ստեղծելու համար:

- ➔ ՈԱՇ-ը նպաստում է ՀՀ բարձրագույն կրթության թափանցիկության բարձրացմանը՝ դարձնելով այն ավելի ուսանողակենտրոն:
- ➔ ՈԱՇ-ը նպաստում է կրթական ծրագրերի արդիականացմանը՝ դրանք համապատասխանեցնելով ուսանողի անհատական կրթական կարիքներին, հետաքրքրություններին և նպատակներին:
- ➔ ՈԱՇ-ը յուրաքանչյուր ուսանողի տրամադրում է հստակ երաշխիքներ, որ տվյալ որակավորումը ստանալով՝ նա ձեռք կբերի դրա համար սահմանված կրթական վերջնարդյունքները:
- ➔ ՈԱՇ-ը ուսանողի համար ոչ միայն որակավորումների համադրելիության գործիք է, այլ նաև միջոց՝ Հայաստանում ցկյանս ուսումնառության հետագա զարգացման համար, որը մի կողմից ոչ ֆորմալ կրթություն ստանալու և արդյունքները պաշտոնականացնելու հնարավորություն է ստեղծում, իսկ մյուս կողմից՝ նպաստում անհատական մասնագիտական զարգացմանը: